Ունիվերսալ Պլյուս

Տեղեկացնում ենք, որ Ռուսաստանում «Կապի մասին» օրենքի փոփոխություններով պայմանավորված՝ «2 համար 1 SIM քարտում» առաջարկը դադարում է գործել: **09.09.2025 – 15.09.2025** ժամանակահատվածում ռուսական **Aiva-Mobile** օպերատորը ավտոմատ կերպով կբլոկավորի այն ռուսական համարները, որոնք գրանցված են ոչ ռուսական անձնագրով:

Արդյունքում.

- Ձեր **հայկական համարը** կշարունակի գործել Ucom ցանցում՝ համարժեք սակագնային պլանով:
- Եթե օգտվում եք **հետվճարային Next Level, Level Up 8500 կամ Unity** սակագնային պլաններից, ժամանակավորապես հնարավորություն չեք ունենա զանգել Ռուսաստան Ձեր փաթեթով տրամադրված րոպեներից: Այդ հնարավորությունը կվերականգնվի **հոկտեմբերի 1-ից**:
- Ամսական ներառված րոպեները սպառելուց հետո, Ռուսաստան զանգերի համար կգործի **70 դրամ/րոպե** սակագին:
- Եթե օգտվում եք **կանխավճարային uSimple** սակագնային պլանից, կշարունակեք զանգել Ռուսաստան **70 դրամ/րոպե** սակագնով:

Անհրաժեշտ քայլեր.

- Հայաստանում ծառայություններից անխափան օգտվելու, ինչպես նաև Ռուսաստանում ռոումինգի հնարավորություն ունենալու համար, անհրաժեշտ է մոտենալ **Ucom սպասարկման կենտրոն** և անվճար փոխարինել SIM քարտը:
- Եթե ցանկանում եք պահպանել ռուսական համարը, ապա SIM քարտի փոխարինումից հետո պետք է պահպանել հին քարտը՝ այն շարունակելու օգտագործման համար:
- Հայաստանից այլևս **չեք կարողանա ստանալ մուտքային զանգեր ռուսական համարին**, ինչպես նաև Ռուսաստանում գտնվելիս ռուսական համարը չի գործի:

Ռուսական համարը պահպանելու պայմաններ.

Ռուսական համարը պահպանելու համար հարկավոր է կատարել ռուսական համապատասխան օրենքների պահանջները, որոնց կարող եք ծանոթանալ այստեղ.

- Համարը գրանցված է հայկական անձնագրով, բաժանորդը՝ ՌԴ քաղաքացի չէ
- Համարը գրանցված է հայկական անձնագրով, բաժանորդը՝ ՌԴ քաղաքացի է
- Համարը գրանցված է ռուսական անձնագրով

Նշենք, որ ռուսական համարը պահպանելու դեպքում Հայաստանում այդ համարով ծառայություններից օգտվել հնարավոր չի լինի, քանի որ ռուսական համարը սպասարկող **Aiva-Mobile** օպերատորը ռոումինգ ծառայություն չի տրամադրում: Հայաստանում ռուսական համարից օգտվելու համար անհրաժեշտ է այն տեղափոխել Ռուսաստանում գործող այլ օպերատորի ցանց, որը տրամադրում է ռոումինգ:

Առաջարկի փակման հետ կապված ռուսական համարով ծառայություններից լիարժեք օգտվելու, Հայաստանում ռոումինգին միանալու ու Հայաստանում այդ համարը ակտիվ պահելու համար, խորհուրդ է տրվում Ռուսաստանում կատարել համարի տեղափոխություն Ռուսաստանում գործող այլ օպերատորի ցանց:

Իրավական հիմք.

- 07.07.2003 թ. «Կապի մասին» №126-ՖԶ դաշնային օրենքի 45.1 հոդվածը
- 08.08.2024 թ. №303-ՖԶ Դաշնային օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասը
- Ռուսաստանի Դաշնության կառավարության 30.12.2024 թ. №1994 որոշմամբ հաստատված Հեռախոսային ծառայությունների մատուցման կանոնների 122-րդ կետի «բ» պարբերությունը

07.07.2003 թ. «Կապի մասին» №126-ՖԶ դաշնային օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ մասը

Ունիվերսալ Պլյուս հետվճարային ծառայության հետ ձեռք բերեք 1 SIM քարտ 2 համարով՝ հայկական և ռուսական*, և ստացեք մի շարք առավելություններ.

- 2 համար 1 SIM քարտում. հայկական համարը՝ Հայաստանում օգտագործելու համար, ռուսականը՝ Ռուսաստանում, և առանց ռոմինգի
- զանգեր Հայաստանից Ռուսաստանի բոլոր ցանցեր սակագնային պլանում ներառված որոպեներից
- մատչելի զանգեր Հայաստանի բոլոր ցանցեր ռուսական համարից՝ Ռուսաստանում գտնվելիս
- անվճար մուտքային զանգեր և՛ հայկական, և՛ ռուսական համարներին թե՛ Հայաստանում, թե՛ Ռուսաստանում գտնվելիս
- ռոմինգ հայկական համարով Հայաստանից և Ռուսաստանից դուրս՝ համաձայն Ucom ռոմինգի սակագների, ինչպես նաև ռոմինգում գտնվելիս մուտքային զանգեր և՛ հայկական, և՛ ռուսական համարներին
- 30 ռուբլի նախնական գումար ռուսական համարին՝ Ռուսաստան մուտք գործելիս նախքան հաշվի լիցքավորումը զանգեր կատարելու համար

Ունիվերսալ Պլյուս հետվճարային ծառայության սակագնային

պլաններն են. 1.06.2021-ից «Ունիվերսալ Պլյուս» ծառայությունը

արդիսկացված է

Ունիվերսալ Պլյուս 3000 Դ	Ունիվերսալ Պլյուս 5500 Դ	Ունիվերսալ Պլյուս 8000 Դ	Ունիվերսալ Պլյուս 12500 Դ
500 րոպե տեղական բոլոր ցանցեր, ԱՄՆ, Կանադա և Ռուսաստան *	1500 րոպե տեղական բոլոր ցանցեր, ԱՄՆ, Կանադա և Ռուսաստան *	3000 րոպե տեղական բոլոր ցանցեր, ԱՄՆ, Կանադա և Ռուսաստան *	6000 րոպե տեղական բոլոր ցանցեր, ԱՄՆ, Կանադա և Ռուսաստան *
7 ԳԲ + 7 ԳԲ**	15 ԳԲ + 15 ԳԲ**	30 ԳԲ + 30 ԳԲ**	50 ԳԲ + 50 ԳԲ**

Classroom, Microsoft Teams***	Microsoft Teams***	Microsoft Teams***	Microsoft Teams***
500 SMS տեղական բոլոր ցանցեր	1500 SMS տեղական բոլոր ցանցեր	3000 SMS տեղական բոլոր ցանցեր	6000 SMS տեղական բոլոր ցանցեր
Անսահմանափակ զանգեր Ucom շարժական ցանցի ներսում ներառված րոպեները սպառելուց հետո			
Անվճար uMediaroom			
3000 դրամ բացասական հաշվեկշիռ	5000 դրամ բացասական հաշվեկշիռ	10000 դրամ բացասական հաշվեկշիռ	15000 դրամ բացասական հաշվեկշիռ
12 դրամ/րոպե տեղական այլ ցանցեր ներառված րոպեները սպառելուց հետո			
15 դրամ/րոպե Ռուսաստան, ԱՄՆ և Կանադա ներառված րոպեները սպառելուց հետո			
շարժական ինտերնետ ներառված ՄԲ-երը սպառելուց հետո			
5 դրամ/ՄԲ	3 դրամ/ՄԲ	2 դրամ/ՄԲ	1 դրամ/ՄԲ

15 դրամ /SMS **SMS տեղական համարների ներառված SMS-ների սպառելուց հետո**
20 դրամ /SMS **SMS միջազգային համարների**

01.04.2024-ից Universal 2900 հետվճարային սակագնային պլանի ամսավճարը կսահմանվի 3000 դրամ նախկին 2900-ի փոխարեն: Մանրամասն՝ այստեղ:

Հայաստանում գտնվելիս Դուք կօգտագործեք Ձեր հայկական համարը Ունիվերսալ Պլյուս հետվճարային սակագնային պլաններից մեկով, իսկ Ռուսաստանում՝ ռուսական համարը Իմ Հայաստան կանխավճարային սակագնային պլանով, և առանց ռոմինգի: Ռուսաստանում գտվելիս Ձեր հայկական համարին կստանաք անվճար մուտքային զանգեր, եթե այն գտնվում է ակտիվ կարգավիճակում, և ռուսական համարն էլ բաժանորդի ցանկությամբ արգելափակված չէ: Հայաստանում ռուսական համարը կարող եք լիցքավորել QiWi էլեկտրոնային դրամապանակի միջոցով, ինչպես նաև առցանց, իսկ հայկական համարը՝ առկա վճարման տարբերակներով:

Ռուսաստանում հայկական համարը կարող եք լիցքավորել QiWi տերմինալների և էլեկտրոնային դրամապանակի միջոցով, ինչպես նաև առցանց՝ www.ucom.am կայքի միջոցով՝ ՀՀ-ում թողարկված բանկային քարտերով: Այլ բանկային քարտերով հայկական համարի լիցքավորման տարբերակներին ծանոթանալու համար սեղմեք այստեղ: Ռուսաստանում

ռուսական համարը կարող եք լիցքավորել առկա վճարման

տարբերակներով:

Պայմանագրի կասեցման, կամ Ունիվերսալ Պլյուս ծառայությունից այլ սակագնային պլանի/բաժանորդագրության տեսակի անցնելու դեպքում, տվյալ առաջարկը կդադարի գործել և Դուք կզրկվեք երկու համար մեկ SIM քարտում ունենալու հնարավորությունից:

Եթե Դուք Ունիվերսալ Պլյուս ծառայությունից անցում եք կատարում մեկ այլ ծառայության հաջորդ ամսվա 1-ից, ապա մինչև ընթացիկ ամսվա ավարտը

Դուք կօգտվեք Ձեր Ունիվերսալ Պլյուս ծառայությունից հետևյալ սահմանափակումներով.

- Ամսական ներառված րոպեները հնարավոր կլինի օգտագործել միայն ՀՀ

տեղական հեռախոսահամարներին, ԱՄՆ և Կանադա զանգելու համար:
Դեպի Ռուսաստան զանգերի համար գանձումը կկատարվի Ձեր հաշվից՝ Ucom-ի կողմից դեպի Ռուսաստան միջազգային զանգի սահմանված սակագնով,
- Ռուսական հեռախոսահամարը կդադարի գործել, և մուտքային զանգերը ռուսական հեռախոսահամարին կլինեն անհասանելի,
- Ռուսաստանում գտնվելիս կօգտվեք ռոմինգից՝ համաձայն ռոմինգի սահմանված պայմանների:
Առաջարկից կարող են օգտվել միայն ֆիզիկական անձինք՝ ներկայացնելով և՛ Հայաստանում, և՛ Ռուսաստանում վավեր անձ հաստատող փաստաթուղթ (օրինակ՝ Հայաստանում վավեր ներքին անձնագրով (ID card) հնարավոր չի լինի օգտվել այս առաջարկից, քանի որ այդ փաստաթուղթը վավեր չէ Ռուսաստանում):
Դուք կարող եք կատարել քարտի փոխարինում, համարի փոփոխություն և մի շարք այլ գործարքներ ինչպես Հայաստանում Ucom սպասարկման կենտրոններում, այնպես էլ Ռուսաստանում MTT սպասարկման կենտրոններում: Հայաստանում գործարքներն իրականացվում են Ucom-ի, իսկ Ռուսաստանում՝ MTT-ի ընթացակարգերի համաձայն:
Ռուսաստանում գտնվելիս հարցերի դեպքում կարող եք անվճար զանգահարել Ucom զանգերի սպասարկման կենտրոն 4444 կարճ համարով կամ 00 7 958 555 4444 համարով:
Հայաստանից և Ռուսաստանից դուրս Դուք կօգտվեք ռոմինգից՝ համաձայն Ucom ռոմինգ ծառայության ընթացիկ սակագների և պայմանների: Ավելին, անհրաժեշտություն չկա ակտիվացնել ռոմինգ ծառայությունը, քանի որ այն արդեն լռելյայն ակտիվ է:
Բաժանորդի պահանջով այս առաջարկի շրջանակներում ձեռք բերված քարտի հայկական հեռախոսահամարին իր ռուսական համարից ստացված մուտքային զանգերը վերահասցեավորվում են՝ համաձայն զանգի հետ եկած հրահանգի:

*Ռուսական համարով ծառայությունները մատուցվում են Aiva mobile-ի կողմից:
**Հավելյալ ԳԲ-եր կստանաք 24 ամիս շարունակ մինչև 31.05.2021 ծառայությանը միանալու դեպքում:
***Մինչև 2021թ. մայիսի 31-ը ներառյալ Twitter, Skype, Zoom, Viber, WhatsApp, Google Classroom, Microsoft Teams հավելվածներից օգտվելիս, ինչպես նաև zoom.us, armedu.am, emis.am, kahoot.com, etwinning.net և e- school.am կայքեր այցելելիս ինտերենտի օգտագործման վճար չի գանձվի: Այս հավելվածներից ու կայքերից անխափան ու լիարժեք օգտվելու համար

հարկավոր է հաշվին ունենալ դրական գումար: Այս կայքերից ու հավելվածներից օգտվելիս հնարավոր է ինտերնետային այլ ռեսուրսների հետ տվյալների փոխանակում, որի համար գանձումը կկատարվի՝ համաձայն սակագնային պլանի:

Ձեր սմարթֆոնն ընտրելու և հատուկ պայմաններին ծանոթանալու համար կարող եք այցելել Ucom-ի ցանկացած սպասարկման կենտրոն կամ մեր ինտերնետ խանութ:

Ռուսաստանում բնակվող Ձեր մտերիմները ևս կարող են օգտվել 2 համար 1 SIM քարտում առաջարկից՝ SIM քարտը ձեռք բերելով Ռուսաստանում: Ավելին

Հեռախոսահամարի կարգավիճակ

Ունիվերսալ Պլյուս ծառայությունն ակտիվանում է բաժանորդագրման պահից:

Ծառայությունն ակտիվ կլինի մինչև հաջորդ ամսվա 20-ը: Ակտիվ շրջանում կարող եք զանգեր ընդունել և զանգել ցանկացած ուղղությամբ, ուղարկել և ստանալ կարճ և մուլտիմեդիա հաղորդագրություններ, օգտագործել GPRS և այլ ծառայություններ:

Մինչև վճարման օրը (յուրաքանչյուր ամսվա 20-ը) վճարում չկատարելու դեպքում Ձեր ծառայությունն անցնում է պասիվ շրջան: Պասիվ շրջանը տևում է մինչև ընթացիկ ամսվան հաջորդող ամսվա ավարտը: Այս շրջանում Դուք կարող եք միայն ընդունել զանգեր, ստանալ կարճ և մուլտիմեդիա հաղորդագրություններ և կատարել զանգեր միայն առաջին օգնության անվճար համարներին: Ի դեպ, ակտիվ ծառայությունների փաթեթները և ավտոմատ ակտիվացված առաջարկները պահպանվում են նաև պասիվ շրջանում, սակայն Դուք չեք կարող դրանք օգտագործել:

Պասիվ (Ծառայության սահմանափակման ժամանակահատված) շրջանում ցանկացած պահի կարող եք վերաակտիվացնել բոլոր ծառայությունները՝ պարզապես վճարելով նախորդ ամիսների պարտքը (բացասական հաշվեկշիռը և չվճարված ամսավճարները): Այնուհետև, Դուք հնարավորություն կունենաք օգտագործել ծառայությունների փաթեթները և ավտոմատ ակտիվացված առաջարկները, եթե դրանց վավերականության ժամկետը չի լրացել:

Եթե մինչև պասիվ շրջանի ավարտը Դուք չեք վճարում գոյացած պարտքերը, ծառայության մատուցումը 1 ամիս ժամկետով կասեցվում է, որի ընթացքում դուք դեռևս ունեք հնարավորություն վերաակտիվացնելու բոլոր ծառայությունները՝ պարզապես վճարելով չվճարված ամսավճարները, առկա բացասական հաշվեկշիռը, ինչպես նաև ուշ վճարման համար սահմանված տույժերը:

Ծառայությունների կասեցման ժամանակ նախորդ ամիսների պարտքն ամբողջությամբ մարելու և միաժամանակ մինչև տվյալ օրվա ավարտը պայմանագիրը լուծելու կամ այլ սակագնային պլանի անցնելու դեպքում ընթացիկ ամսվա համար ամսավճար չի գանձվի:
Կասեցման ժամանակահատվածում Ծառայության նախորդ ամիսների պարտքն (չվճարված ամսավճարները, առկա բացասական հաշվեկշիռը, ինչպես նաև ուշ վճարման համար սահմանված տույժերը) ամբողջությամբ մարելու դեպքում Ծառայությունը վերաակտիվանում է: Եթե մինչև ծառայության կասեցման ժամկետը լրանալը պարտքն ամբողջությամբ չմարեք, Ձեր բաժանորդային պայմանագիրը Ucom-ի կողմից կարող է միակողմանի լուծվել առանց Ձեզ լրացուցիչ տեղեկացնելու: Այս դեպքում Ձեր հեռախոսահամարը կհատկացվի այլ բաժանորդի:
Բաժանորդային Պայմանագրի լուծումը Բաժանորդային պայմանագիրը Բաժանորդի կամ Ucom-ի նախաձեռնությամբ լուծվելու կամ այլ սակագնային պլանի անցնելու դեպքում ընթացիկ ամսվա ամսավճարը ենթակա է ամբողջությամբ գանձման բացառությամբ.

- Առաջին ամսվա ընթացքում Բաժանորդային պայմանագիրը լուծելու կամ այլ սակագնային պլանի անցնելու դեպքի: Տվյալ պարագայում ամսավճարը հաշվարկվում է բաժանորդագրման օրվանից սկսած մինչև ընթացիկ ամսվա ավարտն ընկած օրերի քանակին համապատասխան գումարի չափով,
- Կասեցման փուլում վերաակտիվանալուց հետո նույն ամսվա 21-ից Բաժանորդային պայմանագիրը լուծվելու կամ այլ սակագնային պլանի անցնելու դեպքի: Տվյալ պարագայում կգանձվի տվյալ ամսվա ամսավճարի 30%-ի չափով գումար:

Վճարման պայմաններ
Ունիվերսալ Պլյուս հետվճարային ծառայության հետ Դուք միշտ վճարում եք ծառայություններից օգտվելուց հետո: Յուրաքանչյուր ամիս Դուք վճարում եք Ձեր սակագնային պլանին համապատասխան ամսավճար և նախորդ ամսվա ընթացքում հավելյալ օգտագործած ծառայությունների գումարը, անկախ Ձեր գտնվելու վայրից (թե Հայաստանում, թե Ռուսաստանում, թե ռոմինգում գտնվելիս):
Ամսավճարում ներառված րոպեները, ՄԲ-երը կամ SMS-ները Ձեր հաշվին փոխանցվում են յուրաքանչյուր ամսվա 1-ից, որի համար պետք է վճարեք մինչև հաջորդ ամսվա 20-ը:
Տվյալ ամսվա ընթացքում չօգտագործված ներառված րոպեները, SMS-ները և ՄԲ-երը, հաջորդ ամիս չեն փոխանցվում:

Ինտերնետի տարածումը և դրա օգտագործումն այլ սարքավորումներից (Tethering) կարող է սահմանափակվել:
Եթե ամսվա ընթացքում օգտագործում եք Ucom-ի այլ ծառայություններ կամ ավելին քան Ձեր ամսական ներառումները, ապա գանձումը կատարվում է Ձեր հաշվեկշռից: Բացասական հաշվեկշռի չափը սահմանվում է համաձայն Ձեր ընտրած սակագնային պլանի. որքան մեծ է սակագնային պլանի ամսավճարը, այնքան մեծ է բացասական հաշվեկշռի չափը: Եթե սակագնային պլանով նախատեսված բացասական հաշվեկշիռը Ձեզ չի բավարարում, 3 ամիս Ucom-ի բաժանորդ լինելուց հետո կարող եք դիմել այն վերանայելու համար՝ լրացնելով համապատասխան դիմում Ucom-ի ցանկացած սպասարկման
սրահում: Ucom -ն իրավունք ունի մերժելու Ձեր բացասական հաշվեկշռի վերանայման պահանջը՝ իր ողջամիտ հայեցողությամբ, եթե Դուք չեք բավարարում Ucom -ի կողմից սահմանված վճարունակության պահանջներին:
Բացասական հաշվեկշռի սահմանաչափը գերազանցելու դեպքում հնարավոր կլինի օգտվել միայն Ձեր սակագնային պլանում ներառված շարժական ինտերնետից և SMS-ներից: Մնացած ծառայություններից կամ ամսական ներառումներից (այդ թվում՝ Ձեր սակագնային պլանում ներառված և չօգտագործված բոնուսներից) օգտվելու համար անհրաժեշտ կլինի մարել ամսավճարի պարտքը, եթե առկա է, և վերալիցքավորել հաշիվը:
Որպես Ucom Ամսական բաժանորդագրությունից օգտվող բաժանորդ, Դուք կարող եք իրականացնել չընդհատվող սեսիա(ներ) (զանգ, SMS, GPRS): Ձեզ անհարմարություն չպատճառելու նկատառումով, անգամ եթե նման սեսիայի ժամանակ սպառել եք գումարային սահմանաչափը, Ucom-ը չի ընդհատի Ձեզ մատուցվող ծառայությունը, և գումարային սահմանաչափը գերազանցող պարտքի համար գանձումը կիրականացվի ավելի ուշ Ձեր հաշվից: Նկատի ունեցեք, որ Դուք պատասխանատվություն եք կրում առաջացած բոլոր պարտքերի վճարման համար:
Սակագնային պլանի փոփոխություն կատարելու Ձեր հնարավորությունը կարող է սահմանափակվել, եթե այն կրում է հաճախակի բնույթ և հանգեցնում է մատուցվող ծառայություններից օգտվելու չարաշահումների:
Ավելին
Ունիվերսալ Պլյուս-ի հետ Դուք կունենաք նաև բացառիկ հնարավորություն ընտրելու մեր առաջարկած լավագույն սմարթֆոններից որևէ մեկը վարձակալության և տարաժամկետ վճարման պայմանով՝ 24 ամսով բաժանորդագրվելով:

Առաջարկից չեն կարող օգտվել

Այն բաժանորդները, ովքեր չեն բավարարում Ucom-ի սահմանած վճարունակության պահանջներին: Ձեզնից կարող են պահանջվել ներկայացնել Ձեր վճարունակությունը հիմնավորող տեղեկություններ և փաստաթղթեր (տեղեկանք աշխատանքի վայրից և այլն) օպտիմալացնելու համար բացառիկ պայմաններով հեռախոսի ձեռքբերումը:

Վճարունակության պահանջներ

Հատուկ պայմաններով հեռախոսները Ձեզ տրամադրելու նպատակով Ucom-ն իրավունք ունի ստուգելու Ձեր կողմից տրամադրվող տեղեկությունները՝ օրենքով չարգելված ցանկացած եղանակով: Ucom-ն իրավունք ունի Ձեր վճարունակության գնահատման նպատակով հարցումներ կատարել ՀՀ-ում գործող վարկային բյուրոներից և ստանալ Ձեր վերաբերյալ վարկային տեղեկատվություն՝ պահպանելով օրենքի պահանջները:

Ucom-ն իրավունք ունի մերժել Ձեզ բացառիկ գնով հեռախոսների տրամադրումը նույնիսկ պահանջվող փաստաթղթերը Ձեր կողմից ներկայացնելու դեպքում, եթե կարծում է, որ Դուք չեք բավարարում իր սահմանած վճարունակության պահանջներին:

Նույն անձը կարող է ձեռք բերել 12 կամ 24 ամիս բաժանորդ մնալու պարտավորությամբ միայն 1 հեռախոս: Եթե բաժանորդն ունի հեռախոսի մասով 12 կամ 24 ամիս բաժանորդ մնալու ընթացիկ պարտավորություն, երկրորդ հեռախոսը չի տրամադրվի:

Բաժանորդը պետք է լինի 23-63 տարեկան ՀՀ տարածքում մշտական հաշվառում ունեցող ՀՀ քաղաքացի և բաժանորդագրվելու ժամանակ ներկայացնի իր անձը հաստատող փաստաթուղթը և սոցիալական քարտը:

Առաջարկից օգտվելու համար կարող է պահանջվել նաև այլ անձի երաշխավորություն: Երաշխավորող անձը պետք է լինի 27 -63 տարեկան, ՀՀ տարածքում մշտական հաշվառում ունեցող ՀՀ քաղաքացի: Նույն անձը կարող է երաշխավոր լինել միայն մեկ անգամ: ԴելՖին,Պանտերա, Թիթեռ բաժանորդները, ովքեր ձեռք են բերել հեռախոս 12 կամ 24 ամիս բաժանորդ մնալու պարտավորությամբ, և այդ ժամկետը դեռևս չի ավարտվել, չեն կարող լինել երաշխավորող այլ անձի համար:

Բացառիկ գնով հեռախոսների առաջարկից օգտվելիս Ucom-ի նկատմամբ ստանձնած պարտավորությունների չկատարման մասին տեղեկությունները ՀՀ օրենսդրությանը համապատասխան կարող են տրամադրվել ՀՀ-ում գործող վարկային բյուրոներին՝ օրենքով սահմանված նպատակով օգտագործման համար:

Մինչև պարտավորության ավարտը պայմանագիրը լուծելու և հեռախոսը սահմանված կարգով չվերադարձնելու կամ Ձեզ վաճառվելու դեպքում, Դուք պարտավորվում եք վճարել հեռախոսի գնի մնացորդային արժեքը, ինչպես նաև տուգանք՝ 10 000 կամ 20 000 դրամի չափով, կախված ձեռք բերված հեռախոսի արժեքից: Տուգանքը չի գանձվի այն դեպքում, եթե պայմանագիրը լուծելու պահին Դուք միևնույն հեռախոսահամարով

վերակնքեք պայմանագիր՝ ձեռք բերելով հեռախոս սույն առաջարկի շրջանակներում, կամ միանաք հետևյալ առաջարկներից մեկին.

- Հեղափոխական առաջարկ
- Հեռախոս հատուկ Ֆինանսավորման հնարավորության պայմաններով

(0% կանխավճար, 0% տոկոսադրույք, 0% սպասարկման վճար, 24 ամիս):